

նեաց) սահմաններուն ընդարձակութեան հասցընել: Աշոտ Բագրատունի (787—826) տիրելով Արտանուշի եւն՝ հիմ դրաւ Կղարջաց կամ Գուգարաց-Տայոց իշխանութեան: Հայ իշխանութիւնս՝ բաց ի Գուգարաց ու Տայոց հայ գաւառներէն՝ շուտով միացուց նաեւ վրական (մեսխ եւն) գաւառներ, եւ այսպէս ի վերջոյ խառն բնակչութեամբ պիտութիւն մ'եղաւ: Իւր մեծագոյն ծաղկման դարն է Ժ. դարը: Հայք յաճախ «Տայոց» անուամբ կը յորջորջեն այս իշխանութիւնը (հմմտ. օրինակի համար «տանն Տայոց»՝ Արիստ. Լաստ., գլ. Ա. եւն, բայց նաեւ «Ղլխորապաղատին իշխանութիւն», գլ. ԺԷ. եւնմանք այլուր): Վրական աղբիւրները՝ Կղարջք գաւառէն առեալ կը կոչեն սովորաբար «Կլարջէնի», — որ ընդարձակագոյն նշանակութիւն մը կ'առնու անով: Իսկ Բիւզանդացիք յաճախ պարզ «Վերք», կը կոչեն, անուանակոչութիւն մը՝ որ ի հարկէ անձանօթ չէ մեր մատենագրաց ալ, եւ որ Գուգարաց բռնշխութեան ենթարկեալ աշխարհաց գոնէ մէկ մասին համար կայ արդէն մեր հին պատմական գրականութեան մէջ ալ: Այս «Վերք», սակայն զանազանելու է բուն Վրաստանէ, որ իւր սեպհական թա-